

կայ շեղան, սակայն հետզհետե՛ ճղմուեցան ու ստրկացան քրտական աւատապետական կարգերուն տակը եւ կեղեքուեցան թրքական կառավարութեան վերին պաշտօնատարներու կողմէ: Բացառութիւններ կարող են նկատուիլ Մասունը, Ձէյթունը եւ քանի մը ուժեղ գիւղախմբեր Սնուսի, Մուշի եւ Վանի շրջաններուն մէջ: Մնացած ամբողջ հայ ժողովուրդը ճորտական պարտաւորութիւններով ենթարկուած էր քիւրտերու եւ թուրքերու տիրապետութեան:

Անգլիացի ճօն ՄակԳոնալդ Բինըրը 1813-ին իր կատարած ճամբորդական նկարագրութիւններուն մէջ կը գրէ. — «Հայաստանի մեծ մասը կ'ենթարկուի բազմաթիւ ուժեղ փաշաներու, որոնք անուանական կերպով կապուած են Բարձրագոյն Դրան եւ կ'արհամարհեն անոր հրահանգները...»

«Հայերը հպատակ են մասամբ թուրքերու եւ մասամբ քիւրտ բէկերու, բայց հաւասարապէս այդ երկուքէն ալ կը ճնշուին»: (John Mac Donald Kinner. Voyage dans l'Asie Mineure et le Kurdistan, Բ. հատոր, էջ 143):

Ընդհանրապէս հայ ժողովուրդի ճնշուած դրութեան մասին նկարագրութիւններու կը հանդիպինք: Քիւրտերու դարաւոր տիրապետութիւնը կամաց կամաց խորացուցած է հա-

ճառով, Նարոյէոն պէտք կը գտայ Ժօրէնը զըրկելու Պարսկաստան:

Եւրոպացի ճամբորդը էրզրումէն անցնելէ յետոյ բաւական դժուարութիւններու կը մատնուի: Իրեն ընկերացող թուրք պահակները ծուռ աչքով կը դիտուին թէ՛ քիւրտերու եւ թէ՛ հայերու կողմէ: Ալաշկերտի գիւղերուն մէջ ստիպուած կ'ըլլայ յայտնելու թէ ինք հայ մըն է, որ էջմիածին կ'ուզէ անցնիլ, ու այդ պարագային թէ՛ քիւրտերու եւ թէ՛ հայերու վերաբերմունքը սիրալիր կը դառնայ: Սակայն Բայազիտի հոշակաւոր քիւրտ Մահմուտ փաշան զայն կը բանտարկէ, իրեն ընկերացող հայերը կը շարձարէ, գիտնալու համար թէ Ժօրէնը ի՞նչ միտիայով կ'ուզէ անցնիլ Պարսկաստան: Առհասարակ հետաքրքրական են հեղինակի գիտողութիւնները հայերու եւ քիւրտերու մասին:

Յերու եւ քիւրտերու միջեւ ճեղքուածքը, եւ նախկին դարերու բարեկամական յարաբերութիւնները փոխուած են տիրապետողի եւ հպատակի յարաբերութեանց: Ժօրէնի (1805-1806) եւ ճօն ՄակԳոնալդի (1813-ին) գրքերուն մէջ բազմաթիւ էջերու կը հանդիպինք, ուր կը նըկարագրուին քիւրտ աւատապետներու շահատակութիւնները թէ՛ հայերու եւ թէ՛ ռայեա քիւրտերու վերաբերմամբ: Այդ նկարագրութիւններէն կ'երեւնայ որ հայերը ծայր աստիճան դժգոհ են տիրող կարգերէն եւ կ'ուզեն որ-եւէ կերպով ազատուիլ քիւրտ իշխանապետներէն: Տեղ մը միայն Ա. Ժօրէն կ'արձանագրէ հայերու կորովի ընթացքը, զոր կ'ուզեմ նոյնութեամբ մէջբերել:

— «Մենք գիշերեցինք Սօլլու (Սնուսի շրջան) հայկական գիւղը, որու բնակիչները առանց նկատի առնելու Եռուսեֆ փաշայի (էրզրումի փաշան՝ Կ. Ս.) հրամանը, մերժեցին մեզի ապաստան տալ առանց վճարումի*): Այս առաջին անգամն էր որ մենք կը հանդիպէինք քրիստոնէաներու, որոնք թուրքերուն ընդդիմութիւն մը ցոյց կուտային. բայց Հայաստանի այս մասին մէջ կառավարութեան հմայքը գրեթէ գէրոյի հաւասար էր: Գիւղացիները զինուած են եւ կուռի վարժ, քիւրտերու յարձակումներուն դիմադրելու պատճառով, որոնց հետ միշտ ընդհարման մէջ են եւ չեն վախնար ո՛չ սպաննալիքէ եւ ո՛չ ալ մահէ»: (P. A. Jaubert. Voyage en Arménie et en Perse, էջ 118):

Ինչպէս կ'երեւի, համատարած ստրկութեան այդ շրջաններուն, ինքնապաշտպանութեան կորովի արտայայտութիւններ ալ ունեցած է հայ ժողովուրդը, բայց մանրամասնութիւնները մեզ հասած չեն: Օրինակ, «Վույ Ա-

*) Այս մերժումի մասին խօսելով Ժօրէն կ'ըսէ թէ իրեն ընկերացող թուրք պահակները սովորութիւն ունէին ամէն գիւղէ տուգանք մը պահանջելու, այն չափով, որչափով որ իրենց ճրի հիւրասիրութիւն կ'ըլլար: Հայերու հիւրասիրութիւնը գովելէ յետոյ, կ'եզրակացնէ որ Սօլլուցիները իրաւունք ունէին հրաժարելու հիւրասիրութենէ՝ անօրինակ տուգանքներէ ազատուելու համար: